ԿԱՐԾԻՔ

Արմինե Վարդանի Գևորգյանի

<<Ներդրումների ներգրավման հիմնախնդիրները հետպատերազմյան Հայաստանում>> ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 <<ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ներդրումների ներգրավման խնդիրները կարևոր տեղ են զբաղեցնում կամայական երկրի տնտեսաքաղաքական օրակարգում: Հետպատերազմյան Հայաստանում վերոնշյալը առանցքային խնդիր է. անորոշ քաղաքական վիճակը թույլ չի տալիս ներդրումների հոսքի հնարավոր ներուժի իրականացում: Հրատապ կերպով պետք է վերլուծել ներդրումների ներգրավման խոչընդոտները և ճանապարհային քարտեզ մշակել դրանց մեղմման ուղղությամբ: Գրախոսվող աշխատանքում իրականացված հետազոտությունները նվիրված են այդ հիմնախնդիրների ուսումնասիրությանը և դրանց լուծմանն ուղղված նոր մոտեցումների մշակմանը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի ***արդիականությունը և հրատապությունը:***

Ատենախոսության ***կառուցվածքը*** հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցը տարբեր ռակուրսներից, ապահովել խնդրի լուծման համար բավարար հիմք:

Աշխատանքի ներածական մասում դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները. այստեղ բնութագրված են տեսական ու մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության ***առաջին՝*** **«ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ»** ***գլխում*** ներկայացվել են ներդրումների ներգրավման հիմնական տեսությունները և վերջինիս վրա ազդող գործոնները:

Աշխատանքի **երկրորդ՝ «ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գլխում** ներկայացվել է ՀՀ ՕՈՒՆ կառուցվածքը և դուրս է բերվել վերջինիս ազդեցությունը ՀՆԱ -ի վրա:

Ատենախոսության **երրորդ՝ «ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» գլխում** փորձ է արվել դուրս բերել ներդրումների համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում և առաջ են քաշվել ՀՀ ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ ռազմավարական քայլերը:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին մեծամասամբ ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ ***հիմնավորվածություն և հավաստիություն:***

Աշխատանքի ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, մշակվել են հետպատերազմյան Հայաստանում ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ ռազմավարական քայլեր, որոնք բաղկացած էին 3 համախմբից:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքներն ընձեռում են որոշակի հնարավորություն կողմնորոշվել ներդրումների ներգրավման հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության ***գիտագործնական նշանակությունը*** պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել հանրապետությունում ներդրումների ներգրավմանն ուղղված ռազմավարության մշակման ընթացքում:

Ատենախոսության վերաբերյալ առկա են ***դիտողություններ***. դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները.

1. Որպես առաջին նորույթ հեղինակը ներկայացնում է ՕՈՒՆ-ի ազդեցության գործակիցը ՀՆԱ-ի աճի ձեռքբերման գործում: Հարկ է նշել, որ բնական է, որ ՕՈՒՆ-ի և ՀՆԱ-ի միջև առկա է կապ: Բացի այդ, նշված կապի բացահայտումը

ռեգրեսիոն էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ դժվար է նորույթ համարել, քանի որ առկա են այլ հեղինակների կողմից ավելի վաղ հրապարակված հոդվածներ (օրինակ՝ ОЦЕНКА ВЛИЯНИЯ ЭКСПОРТА И ПРЯМЫХ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ НА ВВП НА ПРИМЕРЕ СТРАН-ЧЛЕНОВ ЕАЭС, ВЕСТНИК НГИЭИ Учредители: Нижегородский государственный инженерно-экономический университет, ISSN: 2227-9407, N 9 (88), 2018, 60-70 с.): Կարծում եմ՝ անհրաժեշտություն կա, որ հեղինակը մանրամասնի, թե առաջին նորույթը որ պրիզմայի տակ է դիտարկել որպես նորույթ, խմբագրի նորույթը և փոխի շեշտադրումները:

2. Ատենախոսության 2.2 ենթագլխում ասվում է՝ <<մասնագիտական գրականության և տարբեր հեղինակների կողմից կատարված վերլուծությունների համադրման արդյունքում մեր կողմից առանձնացվել է ներդրումային միջավայրի ձևավորման և ներդրումների ներգրավման վրա ազդող 30 գործոններից բաղկացած համախումբ>>, շարունակելով հեղինակը նշում է՝ <<Խմբի առաջին գործոնը, որը ընտրվել է մեր կողմից ...>> և այլն: Ատենախոսության պարագայում ցանկալի է նկարագրել և հիմնավորել, թե ինչ մեթոդով է իրականացվում կամայական ընտրություն, այլապես կարելի է վիճարկել, թե ինչու հենց այդ 30 գործոնները: Եթե, օրինակ, հեղինակը փորձագիտական գնահատման մեթոդն է կիրառել, այն պետք է ներկայացված լիներ:

3. 3.1 ենթագլխում հեղինակը ներկայացնում է ներդրումների համար նպաստավոր ոլորտների բացահայտման համար նպատակով կիրառված մոտեցումը, որի երկրորդ կետը՝ <<Պատկան մարմինների պատասխանատուների հետ հարցման միջոցով բացահայտել ներդրումների համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում>>, իրականացվել է հիմնվելով 17 դիտարկումների վրա և առաջնորդվելով 3 հիմնական հարցից բաղկացած հարցաթերթիկով: Վերոնշյալի հիման վրա հեղինակը առանձնացրել է ներդրումների համար նպաստավոր ոլորտները (էջ՝ 83): Ցանկալի կլիներ, որ հեղինակը իր ողջ աշխատանքի ընթացքում կիրառեր գիտական ընդունելի մեթոդներ. նման իրավիճակում հիմնավորեր նշված 17 անձի կոմպետենտ լինելը, թե արդյոք վերոնշյալները կարող են փորձագետ համարվել՝ անանուն

նշելով գոնե վերջիններիս զբաղեցրած պաշտոնները, հիմնավորեր դիտարկումների թվի բավարար լինելը, հարցաթերթիկում ընդամենը 3 հարցի բավարար լինելը և այլն:

4. Երրորդ նորույթում հեղինակը նշում է՝ <<Բացահայտվել են ՀՀ-ում ներդրումային գրավչություն և ներդրումային ներուժ ունեցող ոլորտները՝ 4 մեթոդաբանությունների համադրման հիման վրա՝ փաստաթղթային վերլուծություն, պետական կառավարման համակարգում անցկացված սոցիոլոգիական հարցումներ, արտահանման բացահայտ համեմատական առավելություն ունեցող ոլորտների բացահայտում և ՕՈՒՆ կանոնակարգման սահմանափակման ինդեքսի համեմատական վերլուծություն: Նորույթի շարադրանքից ելնելով՝ ենթադրվում էր, որ վերջում հեղինակը կներկայացնի 4 մեթոդաբանությունների կիրառման համադրությամբ ստացված ոլորտների ընդհանրական համակարգված ցուցակ և այսուհետ կկենտրոնանա վերոնշյալի վրա, սակայն դա բացակայում է:

5. Երկրորդ նորույթում հեղինակը նշում է՝ <<Մշակվել են հետպատերազմյան Հայաստանում ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ ռազմավարական քայլեր, որոնք բաղկացած էին 3 համախմբից՝ 1.***<u>մեթոդական գործիքակազմ</u>***<u>, որը պետք է հաշվի առնվի ՀՀ ներդրումների ներգրավման ռազմավարություն մշակելիս:</u> էջ 94 -ում միևնույն **մեթոդական գործիքակազմի** մասին ասվում է՝ <<Այսպիսով, փորձենք ներկայացնել այն ***մեթոդաբանությունը***, որի հիման վրա էլ պետք է կառուցվի ճգնաժամային իրավիճակների հաղթահարմանն ուղղված ներդրումների ներգրավման ռազմավարությունը>>, էջ 99-ում հեղինակը նշում է՝ << Այսպիսով մեր կողմից ներկայացվեցին այն **մեթոդական ցուցումները**, որոնք անպայմանորեն պետք է հաշվի առնվեն ՀՀ ներդրումային ռազմավարությունը մշակելիս>>: Կարիք կա ճշտգրտման. մշակված ռազմավարական քայլերի առաջին համախումբը մեթոդական գործիքակազմ է, մեթոդաբանություն, թե մեթոդական ցուցումներ: Աշխատանքը վերլուծելով՝ պարզ է դառնում, որ ավելի նպատակահարմար է կիրառել մեթոդական ցուցումներ արտահայտությունը:

6. Երկրորդ նորույթում առաջարկվում են 3 համախմբից բաղկացած ռազմավարական քայլեր, ի դեպ, որոնց մի մասը բավական ակնհայտ քայլեր են, ինչպիսիք են՝ << 1-ին քայլ՝ ներդրողներին հստակ ներկայացնել, թե ՀՀ տնտեսության որ ոլորտում իրականացված ներդրումը կարող է արդյունավետ լինել արտաքին շուկաներ դուրս գալու տեսանկյունից>>, <<2-րդ քայլ՝ Անհրաժեշտ է մշակել ՀՀ ներդրումների ներգրավման ռազմավարություն և խստիվ հետևել դրանում նախանշված յուրաքանչյուր թիրախի ճիշտ ժամանակին կատարմանը>> և այլն: Ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակը փորձեր միավորել վերոնշյալ երեք համախմբերը, լուծեր դրանց համադրման, պատճառահետևանքային կապի ապահովման և այլ խնդիրները և հանդես գար Հետպատերազմյան ՀՀ-ում ներդրումների ներգրավման հիմնախնդիրների լուծման ռազմավարական քայլերի համախմբով. տվյալ դեպքում ատենախոսության հիմնական խնդիրը, որը առաջ էր քաշվել հեղինակի կողմից՝ <<մշակել հետպատերազմյան Հայաստանում ներդրումների ներգրավմանն ուղղված ռազմավարական քայլերի **համախումբ**, որը կներառի մինչ այդ արձանագրված խնդիրների լուծման գործիքակազմ>> ամբողջությամբ լուծված կլիներ: Հեղինակը առաջ է քաշել ռազմավարական քայլերի 3 համախումբ, և առաջին հայացքից պարզ չէ, թե արդյոք օրինակ՝ երկրորդ համախմբի քայլերը, որոնք ուղղված են <<ՀՀ-ում ներդրումային քաղաքականության իրականացման ընթացքում թույլ տված սխալների և թերացումների>> շտկմանը, գործնականում չեն մտնի <<կոնֆլիկտի>> մեջ 3 համախմբի ՝ <<30 գործոններից բաղկացած համախմբի այն գործոնների շտկմանն ուղղված գործիքակազմ, որոնց մասով Հայաստանը զիջում էր հարևան և ԵԱՏՄ երկրներին>> քայլերի հետ:

7. Հեղինակը կատարել է մեծածավալ վերլուծություն, սակայն կարիք կար համակարգելու արված աշխատանքը. շատ թույլ է ներկայացված և հիմնավորված, թե որ վերլուծությունը որ նպատակի և որ նորույթի համար է արված՝ բացառությամբ առաջին նորույթի: Տերմինների անզգույշ օգտագործման պատճառով հաճախ դժվարըմբռնելի է դառնում, թե

շարադրվածը ինչին է նվիրված, հաճախ պարզ չէ, թե ներկայացվածը հեղինակի կարծիքն է, հարցման արդյունքն է (օրինակ էջ 83-84) և այլն:

8. Աշխատանքում առկա են մի շարք տեխնիկական բնույթի խնդիրներ. մասնավորապես՝ առաջին նորույթում հեղինակը նշում է, որ <<ՕՈՒՆ-ի միավոր աճը նպաստում է ՀՀ ՀՆԱ-ի աճին 1,56 միավորով>>, այնինչ էջ 49-ում նշված է 1.52 և այլն :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այնուամենայնիվ, արված դիտողությունները- չեն նսեմացնում հետազոտության արժեքը: Դրանք հետապնդում են հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Ա. Գևորգյանի թեկնածուական ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն հետազոտություն, որում փորձ է արվել լուծել հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները լրամշակվելուց հետո կարող են օգտագործվել ՀՀ-ում ներդրումների ներգրավման հիմնախնդիրների լուծման գործընթացում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Ա. Գևորգյանի <<Ներդրումների ներգրավման հիմնախնդիրները հետպատերազմյան Հայաստանում>> թեմայով ատենախոսությունը համապատասխանում է <<Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ

դրա հեղինակն արժանի է Ը.00.02 <<Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
14.04.2023թ.

ՏԻԿԻՆ Ն. ՄԻՐԶՈՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
Բ. Գ. Թ.
ԵՊՀ գիտական քարտուղար Մ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

14.05.2023թ.